

«ԱՆԻՆ» ՄՊԱՍՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԵՆՈՒՅԹՆԵՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

«Միշտ կա մեկը, ում ողջ կյանքում համարում են քո միակ ու հավերժական ուսուցիչը ու հետո՝ քո բոլոր քայլերով փորձում հաշվետու լինել»,- մեր գրողի սկզբում մշտում է Անգելինա Նազարյանը՝ Թբիլիսիի «Անի» պարի համույթի երիտասարդ ու եռանդուն պարուսույցն ու պարի վարպետ, 20-րդ դարավերջին Թբիլիսիում գործող ժողովրդական պարերի պարուսույց, երջանակահիշատակ Միքայել Հովսեփյանի այն եզակի սաներից մեկը, ով, ուսուցչի սատակման հավատարիմ, շարունակեց պար ուսուցանելու բարի առաքելությունը:



Նրան: Սկսեցի հաճախել Էդիկ Խաչատրյանի Թբիլիսիում հիմնած «Հայք» համույթ: Ի դեպ, այստեղ էլ սերտեցի պարուսույցի այն հատկանիշները, որոնք նախադրյալ դարձան հետագա գործունեության համար: Միշտ օգնում էի նորեկներին՝ յուրացնել պարը: Համույթով մենք շրջագայեցինք Ֆրանսիա (Փարիզ, Մարսել, Ալֆոլի, Սոնմորան), Հունաստան (Սալոնիկ), Բուլղարիա (Բուրգաս, Պլովդիվ): Սովորել են նաև Գյումրիի Շաբոյանների անվան պարավետսի ուսումնարանում:

Պարը պար, բայց, միջնակարգ ավարտելուց հետո, Անգելինան փորձեց «լուրջ մասնագիտությամբ» զբաղվել՝ ուսանելով Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ատանմաբուժական ֆակուլտետում:

Այդ ընթացքում Հայաստանում մեկնարկել էին Համահայկական խաղերը, եւ ես, որպես վիրահայերի բասկետբոլի թիմի անդամ, մեկնեցի մասնակցության. - շարունակում է Անգելինան: Այստեղ, ողջ աշխարհից ժամանած հայերն էին: Երեւի այդ ժամանակ էր, որ իմ մեջ արթնացավ ուժերիս ներածին չափով հայապահպանությանը նպաստելու ցանկությունը, որը պիտի միանար վաղեմի երազանքիս հետ: Մեր համայնքի անդամներից Գուրգեն Հեյրանյանի եւ Միշա Շահինյանի աջակցությամբ պարի առաջին խունթս բացվեց Թբիլիսիի թիվ 93, ապա 110 (այժմ՝ թիվ 103) եւ 98 դպրոցներում: Ես շատ շնորհակալ եմ երկու դպրոցների տնօրեններին՝ Արչիլ Չխաիձեին եւ Գորգի Սոնցելիձեին, ում աջակցությամբ իմ սաների թիվն այսօր անցնում է հարյուրը, ի դեպ, սաներիս թվում ոչ միայն հայեր են, կան վրացիներ, ռուսներ, ադրբեջանցիներ, եզդիներ, ովքեր ցանկանում են հայկական պար սովորել: Իսկ ատանմաբույժիս մասնագիտությունն այսօր իրեն հիշեցնել է տալիս՝ միայն դիպլոմի առկայությամբ:

35-ամյա Անգելինան ամուսնու՝ Գարեգին Քոչյանի հետ դաստիարակում է երկու փոքրահասակ երկվորյակների՝ Մարիային եւ Գեորգին, այդուհանդերձ, պարից ու հագեցած աշխատանքային ժամերից երբեք չի հրաժարվում: Արդյունքն ակնհայտ է. նրա «Անին» մշտապես իրավիճակում ու մասնակցում է Վրաստանում տարվող ու պարին առնչվող գրեթե բոլոր մրցույթ-փարատուների, ուր հաճախ արժանանում է լավագույն մրցանակներ:

Այսպես, գործունեության ընթացքում, «Անին» արժանացել է Թբիլիսիի քաղաքապետարանի «Մայա-Նովա» ոսկե մեդալի, երկու Գրան պրիի՝ Բաթումիի «Ոսկե մարգարիտներ» եւ, ապա, Թբիլիսիում անցկացվող փառատոների ժամանակ «Լավագույն ազգային պար» անվանակարգում, ինչպես նաև Հայաստանի Մշակույթի եւ Սփյուռքի նախարարությունների հատուկ մրցանակների՝ հայ մշակույթը պահպանելու ավանդի համար: Իսկ մշակավորներից, թերեւս, վերջինը, ինչպես արդեն նշեցինք՝ անցած տարվա հոկտեմբերի 26-ին, Թբիլիսիում, CDI - կողմից անցկացվող պարի միջազգային մրցույթ-փառատոնն էր:

- «Անին» ներկայացավ Հայկական պարերի պարուսույցի եւ վրացական «Կինտաուրի» պարով, - սաուն է Անգելինան: - Մենք նվաճեցինք երկրորդ տեղը ու՝ նաև իրավեր ստացանք Իսպանիա մասնակցելու Ֆիեստալոնիա փառատոնին: Սա լուրջ պատասխանատվություն է, եւ մենք ամեն ինչ կանենք՝ պատվով ներկայանալու համար: Ամանորի գիշերն իմ ցանկությունն ու խնդրանքը հենց դա էր: Լավ է, երբ տարին դիմավորում ես արդեն հստակ նպատակով: Արդեն, արմատ ու հիմք ունեցող մտադրություն-ցանկությամբ: Մենք «Անին» հաջողություն ենք մաղթում, իսկ Անգելինային՝ «հաշվետու լինելու» հարուստ պաշար ու կարողություն: Ահավասիկ, երախտապարտ ու հաշվետու լինելու զգացումը նաև կարող է թելեր տալ ու տաղանդ բացահայտել...

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՅԱՆ

ՓՈՒՍՎՈՒՄ Ե ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԵ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը՝ 2017-2021 թվականների միասնական ազգային ռազմավարության շրջանակներում, փոխում է բարձրագույն կրթության ֆինանսավորման մեթոդը՝ հիմքում դնելով դիվերսիֆիկացման սկզբունքը:

Ինչպես հայտարարեցին նախարարությունում՝ չնայած հանրակրթական ծրագրերի համար իրականացվող ծախսերի իրատեսական տարբերությանը, բոլոր վաուչերների արժեքը միեւնույնն է: Միաժամանակ, պետական համալսարանների համար սահմանվել է ուսման վարձի ամենաբարձր աստիճանը:

«Վաուչերը համալսարանների համար եկամտի հիմնական աղբյուրն է, ուստի վաուչերային համակարգը հանգեցնում է որոշակի բացասական արդյունքների: Մասնավորապես, ստեղծում է կառավարման խեղաթյուրված համակարգ, լրիվությամբ չի ապահովում կրթության մատչելիությունը եւ պայմաններ չի ստեղծում կրթության որակի բարձրացման համար, անհրաժեշտ կայունությունը ինստիտուցիոնալ զարգացման ուղղությամբ: Իրավիճակը եսական փոփոխություններ չի կրում նաև առաջնահերթային ծրագրերի ֆինանսավորման պայմաններում»,- ասված է գերատեսչության ռազմավարության փաստաթղթում:

Կրթության նախարարությունում նշում են նաև, որ կարիքավոր ուսանողների ֆինանսավորման սոցիալական ծրագիրը 2013 թվականից եռապատկվել է եւ 2017 թվականին կազմել 4,5 միլիոն լարի, 2,5 անգամ ավելացել է 4,1 միլիոն լարիի է հասել պետական կրթաթոշակի ծրագիրը, որի նպատակը բարձր առաջադիմության ուսանողների աջակցությունն է: Վերջին հինգ տարիների ընթացքում պետությունը լրիվությամբ ֆինանսավորում է բակալավրիատի ծրագրերը, հստակ, բնագիտական, հումանիտար, սոցիալական, ագրարային եւ ինժեներիային ուղղություններով:

«Չնայած նրան, որ գործող ֆինանսական համակարգը դրական դեր է կատարել պետական միջոցների ծախսման, թափանցիկության եւ արդյունավետության ուղղությամբ, միեւնույնն է, չի ապահովում կրթության որակի բարձրացումը: Բարձրագույն կրթության համար իրատեսական ծախսերը շատ ավելի են, քան ծախսում է պետությունը, ուստի անհրաժեշտ է մշակել բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր մոդել»,- ասված է ռազմավարության փաստաթղթում:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «ԴՊՐՈՅԻ ԻՆՔԵԱԳԵԱԿՏՈՒՄԸ՝ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐՈՎ

«Դպրոցի ինքնագնահատումը՝ զարգացման համար» ծրագրի մասնակից հանրային դպրոցների տնօրենները եւ ծրագրում ներգրավված կրթական համակարգի մասնագետներն անցկացրին անդրանիկ հանրագումարային հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիզաուրին եւ զննահատման ու քննությունների ազգային կենտրոնի տնօրեն Սայա Միմինոշվիլին:



Հանդիպումն անցկացվեց երկու հիմնական ուղղություններով՝ տնօրենները, ովքեր ծրագրի շրջանակներում ծանոթացան միջազգային փորձին, խոսեցին դպրոցի ներքին զննահատման եւ զարգացման համակարգի մասին: Բանավեճ անցկացվեց Վրաստանում գործող դպրոցներում առկա մարտահրավերների եւ հնարավորությունների մասին: Նշենք, որ «Դպրոցի ինքնագնահատումը զարգացման համար» ծրագիրը, որն իրականացնում է զննահատման եւ քննությունների ազգային կենտրոնը, անց է կացվում «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի ու «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում:

Նշենք, որ «Դպրոցի ինքնագնահատումը զարգացման համար» ծրագիրը, որն իրականացնում է զննահատման եւ քննությունների ազգային կենտրոնը, անց է կացվում «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի ու «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում:

հանդիպումներ եւ ուսումնական գործուղումներ՝ Դանիայում, Գերմանիայում եւ Հոլանդիայում: Ընթացքի մեջ գտնվող երկրորդ փուլը նախատեսված է պահանջների վրա հիմնված զննահատման եւ զարգացման մոդելների մշակում: Վերջին եզրափակիչ փուլը նախատեսված է ուսումնասիրությունների, ինչպես նաև ստացած գիտելիքների եւ փորձի ընկալման զարգացմանը:

ՀՈՒՍԱՆՔ, ՈՐ ԱՅՄՊԻՍԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ՀԱՐՈՒՆԱՎԱԿԱՆ



Ուսուցման պրոցեսն ավելի հետաքրքիր եւ բեղմնավոր լինելու համար կրթության բնագավառում անցկացվում են մրցույթներ, վիկտորիաներ, օլիմպիադաներ: Եվ պատահական չէ «Kings»-ի անկախ օլիմպիադայի անցկացումը: Այդ առումով մաթեմատիկայի եւ անգլերենի մրցույթներին մասնակցեց եւ դուրս եկավ եզրափակիչ Ախալցխայի մունիցիպալիտետի Ծղալբեիլայի հանրային դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Սրբուհի Դուրգալյանը՝ արժանանալով դիպլոմի:

Նշենք, որ աղջնակն արդեն մի քանի տարի է, ինչ մասնակցում է հանրապետական օլիմպիադաներին եւ՝ հասնում եզրափակիչ փուլ՝ ճանաչվելով սրամիտ թափանցող միտք ունեցող սանուհի: Հաջողություն ցանկանանք Սրբուհուն, որ առաջիկայում եւս բազում հաղթանակներ ունենա մրցույթներում եւ բարձր պահի իր դպրոցի անունը: Հուսանք, որ այսպիսի մրցումները կլինեն շարունակական եւ դրական իմպուլս կտան ուսման գործընթացին:

ԿԱՐԻՆԵ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ԶԱՎԱԽԵԹԻ ԴԱՆԻՐ. ԽՈՂԵՐ ԵՎ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Վաղուց ի վեր Զավախեթին հռչակված է իր բարձր որակի, համով-հոտով պանիրներով: Այստեղ տարեցտարի կատարելագործվում էին պանիրների արտադրության որակական ցուցանիշները, ընդլայնվում էր դրանց տեսականին: Թե՛ Ախալքալաքի եւ թե՛ Նինոծմինդայի շրջաններում պատրաստվում էին շվեյցարական, հոլանդական պանիրներ, վրացական սուլզունի, կովկասյան եւ այլ տեսակի պանիրներ: Զավախեթի պանիրների վաճառքի շուկան ավելի հեռու էր գնում: Հիմնականը, իհարկե, քաղաքամայր Թբիլիսին էր, բայց հատկապես շվեյցարական ու կովկասյան պանիրներն արտահանվում էին Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ), Ուկրաինա (Կիև, Դոնբաս), եվրոպական մի շարք երկրներ:

Այն ժամանակ, երբ կյանքի բնականոն ընթացքը դուրս սայթաքեց իր շավղից, երբ ամեն ինչ տակն ու վրա եղավ Խորհրդային Միության փլուզումով, դրան համընթաց փլուզվեց նաև երկրի էկոնոմիկան, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, շարքից դուրս եկան նաև պանիրադրժարանները: Հետո... Հետո՝ էլի կյանքը

տոննա՝ շվեյցարական, մինչև 45 տոննա՝ խորհրդային, 20 տոննա՝ հոլանդական եւ ուրիշ տեսակի պանիրներ: Այդ ամենը, ցավոք, պատմություն դարձան: Այլևս չենք վերլուծում հետխորհրդային տարիների իրավիճակը: Միայն ասենք, որ ներկայումս շրջանում պատրաստվում են վրացական պանիրներ եւ քիչ քանակի՝ սուլզունի: Պանիր արտադրողները հիմնականում ֆերմերներն են եւ անհատ ձեռներեցները:

- Իսկ պանիրների պատրաստման տեխնիկական միջոցները բավարարո՞ւ էին:
- Անպայման: Պանիրների պատրաստումը իրականացվում էր վեց գործարաններում՝ Նինոծմինդա, Գորելովկա, Գանձա, Խուլզունո, Հեշտիա եւ Գոնդուրա: Դրանք ավելի կամ պակաս չափով հագեցված էին անհրաժեշտ սարքավորանքներով եւ պարագաներով: Իսկ ներկայումս պանիրների արտադրությամբ զբաղվում են 60-ից ավելի մեծ եւ փոքր արտադրամասեր, որոնք ապահովված չեն կաթնամթերքների արտադրության ժամանակակից տեխնիկայով եւ սանհիգիենիկ պայմաններով: Կարելի է համեմատել, որից եւ կախված է արտադրանքի որակը: Եվ առհասարակ արտադրության ոլորտում չկա պետական միասնական պահանջումը, նաև՝ հսկողություն, որը կնպաստի արտադրանքի եւ որակի բարելավմանը եւ քանակի աճին:

Բանն այն է, որ արտադրողը ինքը ապրանքը չի առաքում շուկա, այլ, այսպես կոչված, «միջնորդներն են» դերակատարները, որոնք պատրաստի արտադրանքն իրենք են դուրս բերում վաճառքի: Մի համագամանք, որը չի կարող իր բացասական ներգործությունը չունենալ ընդհանուր արտադրանքի վրա:

- Իսկ առհասարակ դրական տեղաշարժեր չե՞ն կատարվում:
- Կատարվում են, բայց ոչ քանակական մեծ աճով ու որակական լուրջ բարեփոխումներով: Գնալով կարգի են բերվում արտադրամասերը, կամաց-կամաց նորացվում են սարքավորանքներն ու մյուս գործիքները, հսկողության տակ է առնվում պանրագործությունը: Ինչ վերաբերում է եվրոպական պանիրների պատրաստմանը, դա դժվարին խնդիր է, քանի որ չկան անհրաժեշտ պայմաններ ու տեխնիկա, նաև՝ գործին լավատեղյակ որակյալ մասնագետներ:

- Ուրիշ էլ ի՞նչ գործոններ են ազդում արտադրանքի որակի բարձրացմանը:
- Այո, կան լուրջ գործոններ, որոնք չի կարելի անտեսել: Գաղտնիք չէ, որ արտադրանքի որակը կախված է

կաթի մաքրությունից, որն այսօր, ցավոք, բացակայում է: Քանի որ նախկին 36 տնտեսությունների փոխարեն ներկայումս կաթ արտադրողների թիվը անչափ շատացել է, որոնք այնքան էլ հոգ չեն տանում մաքրության մասին, միայն կաթն իրացնելու մասին են մտածում: Մյուս կողմից էլ՝ չկան սան-հիգիենիկ անհրաժեշտ պարագաներ:

- Իսկ ընթացիկ տարում ինչպիսի՞ն էր կաթի արտադրությունը:
- Կասեինը՝ ոչ այնքան հաջող: Ամռան կեսերից սկսած բնակիչների մասնապատ պայմաններն իրենց ազդեցությունն ունեցան կաթի արտադրության վրա: Այն կտրուկ նվազեց, սովորական տարիների համեմատ՝ 35-40 տոկոսով: Բերենք միայն մեկ օրինակ. եթե 2016 թվականի նոյեմբերին, ֆերմերային տնտեսություններից մեկում ստացվել էր 19 տոննա կաթ, ապա՝ այս տարվա համապատասխան ժամանակամիջոցում այն եղել է ընդամենը 9 տոննա:

- Ի՞նչ սպասելիքներ կան առաջիկայում:
- Քանի որ ընթացիկ տարին 2018 թվականը, Վրաստանում հայտարարված է «Պանրի տարի», ուստի, շրջանի ֆերմերային տնտեսությունները, ինչու չէ, նաև պանրագործները, աշխատելու են ուժերի ավելի մեծ լարումով, անհամեմատ բարելավելու են անասունների խնամքն ու պահվածքը, դրանց համապատասխան էլ՝ մթերքների քանակն ու որակը, վերակառուցելու են իրենց աշխատանքը: Միտում կա՝ նաև պանիրների տեսականու ընդլայնմանը:

Նախապատրաստական աշխատանք է տարվում նաև «Պանրի փառատոնին»՝ ըստ պատշաճի մասնակցելու համար:

- Ձեր խոսքի եզրափակիչ մասում ի՞նչ կավելացնեիք:
- Ասածին կհավելեի, որ Զավախեթին, իհարկե նաև Նինոծմինդայի շրջանը, եղել են մնում են երկրում գյուղմթերքների, առավելապես պանրի արտադրության հիմնական բազան եւ հիմա ենք զգում, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի շատ ու որակական պանիրների պատրաստումն ու դրանց իրացումը:

Միավրած չեն լինի, եթե ասեն, որ Զավախեթիի պանրի համբավը երբեք չի սասանվի: Ահա տարին սկսվել է: Ամառորի իմ շնորհավորանքն են ուղղում մեր սիրելի «Վրաստանի» աշխատակազմին, նրա խմբագիր Վան Բայբուրջյանին, թերթի բոլոր բաժանորդներին ու ընթերցողներին:

Հարցազրույցը՝ ՄԱՆՈՒԿ ԿԱՐԱՄԱՆՅԱՆԻ

կամաց-կամաց հունի մեջ մտավ, վերակառուցվեցին ու վերափոխվեցին նախկին հաստատությունները, ի հայտ եկան նոր գործելակերպեր եւ նոր տնտեսածեսեր: Արտադրությունն էլ, աստիճանաբար, շտկեց իր մեջքը, ուղի հարթեց հետագա վերընթացի համար:

Գյուղմթերքների, առավելապես պանրի արտադրության ներկա վիճակի եւ ապագա հեռանկարների մասին խնդրեցինք ավելի մանրամասն տեղեկություններ հարցորդել Սեյրան Կյուրեղյանին: Նա հմտացել է պանիր պատրաստելու իր մասնագիտության մեջ եւ նա, ոչ միայն Նինոծմինդայի շրջանի, այլև տարածաշրջանի եւ ամբողջ Վրաստանում հայտնի պանրագործներից է:

Սեյրան Կյուրեղյանը ծնվել է շրջանի Փոկա գյուղում, որտեղ եւ ավարտել է միջնակարգը, ստացել բարձրագույն կրթություն, կազմել է ընտանիք, աշխատել է տեղի դպրոցում, ապա՝ տնօրեն, ընտրվել է կոլտնտեսության նախագահ: Խորհրդային կարգերի փլուզումից հետո՝ Ս.Կյուրեղյանն ընտանիքով տեղափոխվել է շրջանի հարավում գտնվող Գորելովկա գյուղը: Այստեղ սկսել է վարել ֆերմերային տնտեսություն, պահում մեծ թվով կովեր, հոգ է տանում նախրի վերարտադրության մասին, գնալով ընդլայնում սեփական տնտեսությունը:

- Պարոն Կյուրեղյան, որոշ մանրամասներ պանիրների արտադրության մասին՝ մինչև 1990 թվականները:

- Իրոք որ, ավելորդ չի լինի, եթե որոշ թվեր ու փաստեր բերենք՝ կաթի եւ կաթնամթերքների արտադրության վերաբերյալ՝ մինչև Խորհրդային կարգերի վերանալը: Անցյալ դարի 80-ականների վերջերին, այսինքն՝ մինչև փլուզումը, տարեկան, միջին հաշվով, արտադրվում էին ավելի քան 3000 տոննա՝ վրացական (աղաջրային), 500

ՆՈՐ ՀԱՐՅՈՒՄՆ ԱՐՏԱՑՈՒՆՑ ՏԵՂԱՇԱՐՄԵՐԻ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԸՆԿՎԱԼՈՒՄԸ



Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI-ի կողմից նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 19-ը ներառյալ, Վրաստանի ողջ մասշտաբով (բացառությամբ բռնազավթված տարածքների), անցկացվեց հարցում, որին ներկայացուցչական ընտրության կարգով ուղղակի հարցմամբ մասնակցել է 2298 քաղաքացի:

NDI-ին հարցումն իրականացել է Մեծ Բրիտանիայի ֆինանսական աջակցությամբ: Հարցումն անցկացրել է CRRC-Վրաստանը:

Հարցման սխալը կազմում է +/-1,9 տոկոս:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Ե ԴՐԱԿԱՆ
NDI-ի կողմից անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 13 տոկոսը լավ է գնահատել կառավարության գործունեությունը, 53 տոկոսը տվել է միջին գնահատական, 2-ը՝ բացասական: Հարցման ենթարկվածների 1 տոկոսը հրաժարվել է պատասխանել՝ կառավարության գործունեության վերաբերյալ հարցին:

ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿՈՒՐՍԻ ՀԱՐՅՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Ե ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ
Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 39 տոկոսը գտնում է, որ երկիրը սխալ ուղղությամբ է զարգանում, 32 տոկոսի կարծիքով՝ տեղաշարժեր ընդհանրապես չեն վավերացվել: Երկրի զարգացման ճանապարհը դրական են գնահատել հարց-

ման ենթարկվածների 26 տոկոսը: Երեք տոկոսը այդ հարցին հստակ պատասխան չի ունեցել:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻ ԵՐՐՈՐԴԸ ԿՈՂՄԱԿԻՑ Ե ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ
NDI-ի կողմից անցկացված հարցման տվյալներով, բնակչության 72 տոկոսը կողմնակից է Եվրամիության անդամակցությանը, 29 տոկոսը՝ գերադասությունը հանձնել է Եվրասիական միությանը: Հատկանշական է, որ հարցման ենթարկվածների 8 տոկոսը վերոնշյալ երկու միտումները չեն պաշտպանում, իսկ 3 տոկոսը հրաժարվել է պատասխանել այդ հարցին:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՄԱՍՆ ԻՐԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ Ե ԳՈՐԾԱՁՈՒՐԿ
Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 19-ը անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 60 տոկոսն իրեն համարել է գործազուրկ, իսկ 40 տո-

կոսը՝ աշխատող: Վերջիններիս թվում հաշվի է առնվել լրիվ հաստիքով կամ կես հաստիքով աշխատողների, պաշտոնական կամ ոչ պաշտոնական աշխատակիցների ինքնուրույն աշխատանքով ապահովվածների (տվյալ պարագայում կարելի էր եկամտուտի ստացումն էլ) թիվը: Հարկ է նշել, որ իրենց գործազուրկ համարող մարդկանց թիվը՝ 72 տոկոսը, բնակվում է ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջաններում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԱՐԴԱՐԱՑԻ
Պատասխանելով հարցին՝ որքանով են վստահ, որ երկրում անցկացված տեղական ինքնակառավարման ընտրություններն արդարացի էին, հարցման ենթարկվածների 18 տոկոսը պատասխանել է, որ լրիվությամբ վստահ է, 35 տոկոսը մասնակի վստահություն է արտահայտել, 19 տոկոսը՝ պակաս վստահություն, իսկ 11 տոկոսն ընդհանրապես ընտրություններն արդարացի չի համարում:
Շարունակելով ընտրությունների թեմային վերաբերող հարցումը՝ հարցման ենթարկվածների 34 տոկոսը վստահություն է հայտնել, որ նորընտիր քաղաքապետերը եւ մունիցիպալիտետների սակրեթուրների պատգամավորները կաշխատեն շատ ավելի լավ, քան նախորդները: 44 տոկոսի կարծիքով՝ տեղական մակարդակով կառավարման մեթոդներում փոփոխություն չի լինի, 12 տոկոսի համոզմամբ՝ մակարդակն էլ ավելի կնվազի, 11

տոկոսը խուսափել է պատասխանից:

ԸՍՏ ԱՌԱՋՆԱԳԵՐՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԻՆԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՐՑՆ Ե
Հատկանշական է, որ ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 54 տոկոսը իր եւ իր ընտանիքի համար կարելի էր հարցը համարում է աշխատանքը, 35 տոկոսի համոզմամբ՝ գլխավորը գների աճն է ու լարիի արժեզրկումը, 30 տոկոսի համոզմամբ՝ գլխավոր հիմնախնդիրն աղքատությունն է, 25 տոկոսը առաջնահերթայինը համարում է կենսաթոշակը, 23 տոկոսը՝ առողջապահության մատչելիությունը: Հարցման ենթարկվածների կարծիքով վերոնշյալ առաջնահերթություններից հետո միայն երկրի տարածքային ամբողջականության հարցն է, որի կողմնակիցը 23 տոկոսն է:

80 ՏՈԿՈՍԸ՝ ՏՂԱՄԱՐԴԱԿԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎԱԶԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԱԿԻՑ
Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման մասնակիցների 80 տոկոսը կողմնակից է տղամարդկանց եւ կանանց իրավահավասարությանը: Հարցի նկատմամբ բացասական դիրքորոշում է ներկայացրել 16 տոկոսը, իսկ 4 տոկոսը հրաժարվել է հստակեցնել իր դիրքը:

ՄԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆՂԻՊՈՒՄԸ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչմանն արժանացած Հովհաննես Չեքիջյանին, Հայրենիքի շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությունից հետո, Սերժ Սարգսյանը նախագահի նստավայրում թեյի սեղանի շուրջ հանդիպում ունեցավ այդ արարողության մասնակից մի խումբ մտավորականների հետ:



Լսել մտավորականների տեսակետները, առաջարկությունները, ինչպես նաև մտահոգություններն ու գնահատականները երկրի իրականության վերաբերյալ:

Հանդիպման մասնակիցները կարևորեցին նման հանդիպումներն ու քննարկումները, Հայաստանի ապագայի իրենց պատկերացումների, հասարակության այսօր մտահոգող խնդիրների, այդ թվում՝ երիտասարդների կրթության, պետության քաղաքացի դաստիարակելու գործում

մշակույթի մեծ դերի, հայոց լեզվի անաղարտության պահպանման եւ մի շարք այլ խնդիրների մասին խոսելը:

Նախագահը պատասխանեց նաև մտավորականներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերել են երկրի անվտանգությանը, պաշտպանությանը, արտաքին քաղաքականությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԵ ՀԱՆԱԳԵՑ ԵԶՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի խորհրդարանը ճանաչեց 2014թ. Իրաքի տարածքում ահաբեկչական խմբավորումների կողմից եզդի ժողովրդի նկատմամբ իրականացված սեղսպանությունը: Ահաբեկչական խմբավորումների կողմից իրենց վերահսկողության ներքո գտնվող Իրաքի Հանրապետության տարածքներում եզդի ժողովրդի նկատմամբ 2014 թվականին իրականացված սեղսպանության դատապարտման մասին հայտարարության նախագծին կողմ քվեարկեց 91, չեղնպահ՝ 1 պատգամավոր:

ՀԱՆՂԻՊՈՒՄ՝ ԵԱԶԿ ՄԻՆՍԿԻ ԽՍՐԻ ՀԱՄԱՆԱԽԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ



Հունվարի 17-ին, Կրակովում անցկացվեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԵԱԶԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը:

Հունվարի 18-ին, Կրակովում կայացավ նաև Նալբանդյանի հանդիպումն Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամադյարովի հետ: Հանդիպումը նախաչեռնել են ԵԱԶԿ Մինսկի խմբի համանախագահները:

ՀԱՅԱՍՏԱՆԵ՝ ՄԱԿ-Ի ՊՍՏՎՈ ՑԱՆԿՈՒՄ

Հայաստանը ներառվել է 2018թ. ՄԱԿ-ի պատվո ցանկում (Honour roll)՝ կազմակերպության կանոնավոր բյուջեին ժամանակին եւ ամբողջությամբ կատարված անդամավճարների համար: 2018թ. հունվարին Հայաստանի կառավարության կողմից ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեին է փոխանցվել 145.843.00 ամերիկյան դոլար՝ որպես ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության գծով 2018թ. տարեկան անդամավճար:

Պատվո ցանկում ընգրկվում են այն անդամ երկրները, որոնք ընթացիկ տարվա առաջին 30 աշխատանքային օրվա ընթացքում ամբողջությամբ վճարում են ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեին անդամակցության գծով ֆինանսական պարտավորությունները: 2018թ. հունվարի 10-ի դրությամբ պատվո ցանկում ներառվել է ՄԱԿ-ի 193 անդամ երկրներից միայն 7-ը:

ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ



Հայաստանում ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտների եւ պետական կառավարման համակարգի մարմինների գործողությունների համակարգումը, հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի ձևավորումն ու ընդհանուր ղեկավարումը երկրի նախագահից անցնելու է վարչապետին: Խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» Հայաստանի օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որին միաձայն կողմ քվեարկեց 93 պատգամավոր:

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գործող օրենսդրությունը Սահմանադրությունը համապատասխանեցնելու հրամայականով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների արդյունքում «Հայաստանի նախագահի ինստիտուտի դերը եւ կանոններն փոփոխվել է: «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» Հայաստանի օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի օրենքի նախագծով ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտների եւ պետական կառավարման համակարգի մարմինների գործողությունների համակարգումը, հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի ձևավորումն ու ընդհանուր ղեկավարումը վերապահվում է Հայաստանի վարչապետին, ահաբեկչության դեմ պայքար իրականացնող հանրապետական գործադիր մարմինները վերանվանվել են պետական կառավարման համակարգի մարմիններ:

հանուր ղեկավարումը վերապահվում է Հայաստանի վարչապետին, ահաբեկչության դեմ պայքար իրականացնող հանրապետական գործադիր մարմինները վերանվանվել են պետական կառավարման համակարգի մարմիններ:

հանուր ղեկավարումը վերապահվում է Հայաստանի վարչապետին, ահաբեկչության դեմ պայքար իրականացնող հանրապետական գործադիր մարմինները վերանվանվել են պետական կառավարման համակարգի մարմիններ:

ԱԶ ԴԵԿՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԱՐԳԵԼՈՂ ՕՐԵՆՔԸ ԱՐԺԱՆԱՑՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների ներմուծումը ժամանակավոր արգելելու մասին» Հայաստանի օրենքի նախագծին:

Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը նշեց, որ նախատեսվում է 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը ժամանակավորապես արգելել աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների «բաց թողնում» ներքին սպառման համար՝ մաքսային ընթացակարգով ներմուծումը Հայաստան:

1-ից մինչև հոկտեմբերի 1-ն արգելել աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների ներմուծումը Հայաստանի տարածք, մինչև Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ղեկտեմբերի 9-ի՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» որոշման մեջ լրացում կատարելու եւ աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող երկրների ցանկում համապատասխան լրացում կատարելը:

Միաժամանակ, մեկ այլ հարցով Հայաստանի կառավարությունը կքննարկի «Աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների ներմուծումը ժամանակավոր արգելելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն անհետաձգելի համարելու հարցը:

Նախագծերով նախատեսվում է նաև՝ մինչև 2018 թվականի ապրիլի 1-ը Հայաստան ներմուծված աջակողմյան ղեկային տեղաբաշխմամբ տրանսպորտային միջոցների սեփականատերերի սեփականության տնօրինման իրավունքը, գործող սեփականատերերը, ըստ նախագծի, կարող են ազատ շահագործել, հաշվառել եւ վերահաշվառել իրենց տրանսպորտային միջոցները:

ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Հայաստանի սփյուռքի նախարարությունը ներկայացրեց Հայաստանի կառավարության 2017թ. գործունեության միջոցառումների ծրագրի եւ գերակա խնդիրների կատարման ուղղությամբ, Հայաստանի սփյուռքի նախարարության իրականացրած աշխատանքները:

2017թ. գերակա խնդիրները եղել են վեցը, որոնց ուղղությամբ կատարվել են

բուն երեւանից ուղարկված մասնագետի ուժերով ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար-2017» ամենամյա մրցանակաբաշխություն, նախարարության կողմից 37 երկրի ավելի քան Սփյուռքի 200 հայկական կրթօջախների առաքվել է մոտ 87 000 կտոր դասագիրք եւ ուսումնաօժանդակ նյութեր են այլև, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը եւ դատապարտմանն ուղղված քաղաքականության շրջանակներում սփյուռքահայ երիտասարդության շրջանում պատմական իշխողության ամրապնդմանն աջակցություն, «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ձևավորում եւ զարգացում, Սփյուռքում ըստ մասնագիտությունների համահայկական ցանցերի ընդլայնում եւ մասնագիտական ներուժի օգտագործում՝ ՀՀ-ի եւ Արցախի տնտեսության զարգացման համար:

Սեպտեմբերի 18-20-ը երեւանում անց է կացվել «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել է 1837 հոգի՝ 71 երկրից (16 երկրից մասնակցել են առաջին անգամ), ընդ որում՝ 1363-ը՝ Սփյուռքից: Համաժողովին հիմնական զեկույցով հանդես է եկել 106 մասնակից՝ 17 երկրից: Համաժողովին հարակից ելույթներով եւ հարցադրումներով հանդես է եկել 168 մասնակից՝ 26 երկրից:

բոլոր նախատեսված ծրագրերը. Հայաստանում սիրիահայերի եւ իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում, Հայապահպանության համար եւ ուժացման դեմ պայքարում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում («Սփյուռք» ամսաթիվի դպրոց, Սփյուռքի երիտասարդների «Արի՛ տուն» հայրենաճանաչության ծրագիր, ԱՄՆ-ի հայկական կրթօջախներ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՎՏՈՒՄՆԵՐԻ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐ

21.01.2018. Բարեկենդան Առաջավորաց Պահոց



Հատուկ է միայն Հայ Եկեղեցուն: Սկսվում է Մեծ Պահքից 3 շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում, այդ օրերին թույլատրվել է միայն աղ ու հաց ուտել, արգելվել է Սբ. Պատարագ մատուցել: Առաջավորաց Պահքի խորհուրդը հեթանոսական ապականությունից մարդկային 5 զգայարանների սրբունն է: Առաջավորաց Պահքը կոչվում է նաև՝ փրկության պահք:

Համաձայն Հայ Եկեղեցու վարդապետների՝ Առաջավորաց Պահքը հաստատել է Սբ. Գրիգոր Լուսավորիչը՝ ի հիշատակ վերոհիշյալ ծոնապահության:

27.01.2018. Երիտասարդների եւ սիրո բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օր

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությանը՝ Սբ. Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրինության օր:

Սբ. Սարգիս Ջորավարի տոնը մեզանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, արդթքով, այլև ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդույթ է:

Սբ. Սարգիս տոնին նախորդող գիշերը՝ երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորույթներից է փոխհնդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սբ. Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին:

Տոնի առթիվ՝ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում: Տոնի օրը, Սբ. Սարգիս Ջորավարի անունը կրող եկեղեցիներում, մատուցվում է Սուրբ Պատարագ, որից հետո՝ կատարվում երիտասարդների օրհնության կարգ:

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍԸ ԲԱՑ Է



Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների գործակալությունը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար, թեպետ բոլոր վարորդներին խորհուրդ է տրվում երթել կել բացառապես ձմեռային անվադողերով:



«Սկզբում մենք կներկայացնենք տրանսպորտի ռազմավարությունն ամբողջությամբ՝ այն, թե մենք ինչպես ենք մտածում այդ ուղղու-

Շաբաթվա որոշակի օրերի հասարակական տրանսպորտը թբիլիսիում կաշխատի գիշային ժամերին: Այդ մասին հայտարարեց թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձենը՝ ընդգծելով, որ թբիլիսիի քաղաքապետարանն աշխատում է գիշերային թբիլիսիի զարգացման հայեցակարգի վրա, որը ներկայացնելու են փետրվարի վերջին:

թյունը զարգացնել չորս տարվա ընթացքում: Փոփոխություններ են պլանավորվում տաքսիների նկատմամբ: Բացի այդ, հասարակական տրանսպորտը որոշակի օրերի կաշխատի գիշերային ժամերին»,- ասաց Կախի Կալաձենը:



Նշենք, որ գիշերային թբիլիսիի զարգացումը եղել է Կախա Կալաձեի նախընտրական խոստումներից մեկը: Նա հայտարարել է, որ գիշերային մշակույթային կյանքի աշխուժացումը կնպաստի նոր ստար-

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԸ ԿԲԵՐՎԻ ՎՐԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ



«Մունդիալ-2018»-ի գավաթը, ամենայն հավանականությամբ, փետրվարի սկզբներին կբերվի Վրաստան

եւ Հայաստան: Այլ մանրամասներ դեռևս հայտնի չեն: Ֆուտբոլի 2018 թվականի աշխարհի առաջնությունից առաջ՝ աշխարհի գավաթը կշրջի նաև Ռուսաստանի 24 քաղաքներում:

Հիշեցնենք, որ աշխարհի 2006 թվականի առաջնությունից սկսած՝ Մունդիալի գավաթը շրջում է աշխարհի տարբեր երկրներում:

21-րդ աշխարհի առաջնությունը 2018 թվականին կկայանա Ռուսաստանի 11 քաղաքների 12 մարզադաշտերում: Այն կմեկնարկի հունիսի 14-ին եւ կեզրափակվի հուլիսի 15-ին: Եզրափակիչ հանդիպումը կկայանա Մոսկ-

վայի «Լուժնիկի» մարզադաշտում:

ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵՆ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՂԹՈՂ

Թբիլիսիում Եվրոպայի ուժեղագույն երկրների եզրագիծը հատեց վետերան ֆուտբոլիստների՝ Դավիթ Պետրիաշվիլու անվան «Ձմեռային գավաթ» մրցաշարը:

Մրցաշարի եզրափակիչում Վրաստանի վետերանների հավաքականը՝ 6:3 հաշվով պարտության մատնեց Իսպանիայի հավաքականին եւ երկրորդ անգամ դարձավ այդ միջազգային մրցաշարի հաղթողը:

Մրցաշարի լավագույն խաղացող Ֆուտբոլիստների թիմի ավագ, թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձենը: Նա աչքի ընկավ նաև խիստ 7 գոլերով, այդ թվում 3-ը՝ եզրափակիչում:

Միջազգային մրցաշարին, Վրաստանի եւ Իսպանիայի հավաքականներից բացի, մասնակցում էին Ուկրաինայի, Թուրքիայի եւ Իտալիայի, ինչպես նաև ՈՒԵՖԱ-ի բաժնի աշխատակիցների կողմից կազմավորված հավաքականները:

ՓԵՏՐԱՎԵՂԱԿ. ՏԱՐԻՆ ԵԶՐԱՓՈՎԱԿԵՑ ՀԱՋՈՂ ԵՆՈՒՅԹՈՎ

2 0 1 7

թվականի եզրագիծը, Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում անցկացվող մրցաշարը նշանավորվեց վրաստանցի մասնակիցների հաջող ելույթով: Մասնավորապես, Մարիա Խաչատրյանը զուգամրցույթում զբաղեցրեց երրորդ տեղը, իսկ Պավել Փիլոյանն ու Գրիգոր Նալգրանյանը, մրցաշարի 32 մասնակիցների շարքում, կարողացան հասնել մեկ ութերորդ եզրափակիչին:

Նշենք, որ մարզիչ Սվետլանա Վարդանյանի ասումով Մարիա Խաչատրյանը պատրաստվում է մարտի 30-ից ապրիլի 2-ը Ավստրիայում անցկացվելիք Եվրոհայկական խաղերին:



Table with 9 columns and 10 rows containing numbers 1 through 43, representing a calendar or schedule.

Large advertisement for 'VRASTAN' featuring a logo and a list of 50 items for sale, including various goods and services.

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445